


# ԳԵՅԶԵՐ

Բարձր ջերմաստիճաններում ջրի եռման պրոցեսը հսկայական մասշտաբներով դիտվում է նաև բնության մեջ՝ գեյզերներում (իսլանդերեն *գեյզա*՝ դուրս հորդել բառից): Դրանք պարբերաբար գործող «շատրվաններ» են, որոնք տաք (եռացող) ջուր են արտանետում գետնի տակից դուրս եկող նեղ անցքերից: Գեյզերում գոլորշին առաջանում է մի քանի տասնյակ մետրի հասնող խորությամբ բնական պահեստարանում, որտեղ լցված ջուրը տաքանում է Երկրի ստորին շերտերից ստացվող ջերմաքանակի հաշվին (տե՛ս նկարը):



Այսպիսի ջրամբարում, խորությունից կախված, ճնշումը կարող է հասնել մի քանի մթնոլորտի ( $p = p_0 + \rho gh$  և եթե  $h = 50$  մ, ապա  $p \approx 6p_0$ ), և ջրի եռման ջերմաստիճանը նրա մեջ կարող է զգալիորեն գերազանցել  $100^\circ\text{C}$ -ը: Երբ գոլորշու ճնշման տակ գեյզերի անցքում ջրի սյան բարձրությունը փոքրանում է, հիդրոստատիկ ճնշման փոքրացման հետևանքով բարձր ջերմաստիճան ունեցող ջուրն այնքան բուռն է սկսում գոլորշիանալ, որ անցքում մնացած ջուրը (ցեխի և քարերի հետ) շարտվում է շատ բարձր՝ մինչև մի քանի տասնյակ և հարյուրավոր մետր:

